ԿԱՐԾԻՔ

Քրիստինե Ռազմիկի Արշակյանի «Ստարտափների զարգացման խնդիրները և արդի մոտեցումները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

<u>Ատենախոսության թեմայի արդիականությունը:</u>
Գրախոսվող ատենախոսությունը վերաբերում է ժամանակակից պայմաններում տնտեսությունների զարգացման արմատական հիմնախնդիրներից մեկին՝ ստարտափերի դերին և նշանակությանը տեխնոլոգիական արդիականացման և տնտեսական առաջընթացի ապահովման գործընթացներում: Ստարտափ ընկերությունները ունենալով ունենալով կարճ ժամանակահատվածում արագ աճ գրանցելու, աշխատատեղեր ստեղծելու և ժամանակի ավելի երկար միջակայքում խոշոր ընկերությունների վերածվելու ներուժ կարող են սկզբունքորեն փոխել տնտեսության զարգացման պարադիգմը:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանն ունի մեծ ներուժ գիտելիքի տնտեսության և զարգացած ինովացիոն համակարգի ձևավորման համար, ոլորտում զարգացումը ապահովվում երկրում առկա ռեսուրսների ամբողջ ներուժի օգտագործմամբ, և դեռ շատ խնդիրներ կան համաշխարհային տնտեսության մեջ մեր երկրի ինովացիոն դիրքի ձևավորման ուղղությամբ: Այն պարագայում, որ կա հետաքրքրություն նոր գաղափարների մշակման և կատարելագործման, նոր հմտությունների ձեռքբերման հետ կապված, կան հրաշալի նախնական գաղափարներ և արտոնագրված գիտելիքներ, որոնք փնտրում են ներդրումներ, կան լավ ներդրումային ծրագրեր փնտրող և ազատ դրամական միջոցներ ունեցող ներդրողներ, կա պետության կողմից ոլորտի զարգացման մեծ ցանկություն, ի վերջո՝ պրոֆեսիոնալ մենեջմենթի ու զարգացման ծրագրի մշակմանն ունակ կադրեր կան, բայց փաստն այն է, որ չկան շոշափելի արդյունքներ:

Փաստենք, որ նորարարությունների ռիսկայնությամբ և ստարտափ ընկերությունների գործունեությանն ուղեկցող անորոշություններով պայմանավորված՝ ժամանակակից պայմաններում էապես մեծանում է դրանց ձախողման հավանականությունը: Ձախողումներից խուսափելու և ստարտափ ընկերությունների կայուն զարգացմանը նպաստող միջավայր ձևավորելու համար կարևոր է ուսումնասիրել և բացահայտել ստարտափ ընկերությունների զարգացման խնդիրները և գտնել դրանց լուծման ուղիները:

Ստարտափերի առևտրայնացման հիմնահարցերի ուսումնասիրությունն այսօր առավել քան երբևէ անհրաժեշտ պայման է դարձել ՀՀ ինովացիոն համակարգի զարգացման համար, քանի որ դրանց հիմնախնդիրների բացահայտմամբ հնարավոր կլինի հասկանալ հայրենական արտադրության զարգացման տեխնոլոգիական հնարավորությունները, միջազգային շուկայում գաղափարների զարգացումն արտադրության պահանջարկին համահունչ և հնարավորինս մրցունակ դարձնելը: Այժմ գործնական արդյունքի հասնելու ուղին գիտատեխնոլոգիական մշակումների

արդյունավետ առևտրայնացումն է, հայկական ինովացիոն տեխնոլոգիաների ստեղծումը և այն՝ միջազգային ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման արժեշղթաներին ինտեգրումը:

Հաշվի առնելով հայկական ստարտափ էկոհամակարգի և գործարար միջավայրի առանձնահատկությունները՝ անհրաժեշտություն է առաջանում վերլուծելու տեղական էկոհամակարգի արդյունավետությունը և հասկանալու հայկական ստարտափ ընկերությունների զարգացմանը խոչընդոտող խնդիրները: Այս տեսակետից Հայաստանում ստարտափ ոլորտի զարգացման առանձնահատկությունների և խնդիրների ուսումնասիրությունը հնարավորություն կտա ստարտափ էկոհամակարգի զարգացումը խթանող համապատասխան քաղաքականություններ մշակել, որոնց միջոցով կարելի է խուսափել առաջացող խոչընդոտներից և ապահովել ստարտափ ձեռներեցության լայն տարածումը երկրում: Կատարված դիտարկումները հիմնավորում են հետազոտության թեմայի արդիականությունը:

<u>Ատենախոսության նպատակը եվ խնդիրները</u>:

Հայաստանում ստարտափ ընկերությունների հիմնախնդիրներին անդրադարձող ու դրանք համակողմանիորեն վերլուծող ու բացահայտող շատ հետազոտություններ չկան: Առկա հետազոտությունները հիմնականում վերաբերում են ՀՀ տեխնոլոգիական ոլորտին՝ ներկայացնելով ընդհանուր վիճակագրական տվյալներ ՏՏ և ճարտարագիտական ոլորտների վերաբերյալ՝ չառանձնացնելով ստարտափ ընկերություններին: Բացի այդ, նշված հետազոտություններում ներկայացվում են տվյալներ հիմնականում տեխնոլոգիական ոլորտի ստարտափ ընկերությունների մասին՝ չներառելով ոչ տեխնոլոգիական ստարտափ ընկերություններին: Այսինքն՝ հայկական ստարտափ ընկերությունների և ստարտափ էկոհամակարգի խնդիրները դեռևս մեթոդաբանորեն և գործնականորեն բավականաչափ հետազոտված չեն:

Հետազոտության **նպատակը** հայկական ստարտափ ընկերությունների խնդիրների բացահայտումն է և դրանց լուծումների առաջադրումը: Նշված նպատակի իրագործման համար հետազոտության հիմքում դրվել են հետևյալ **խնդիրները**.

- ուսումնասիրել ստարտափ ձեռնարկատիրության և ստարտափ ընկերությունների վերաբերյալ տեսական հայեցակարգերը, հստակեցնել ստարտափ ընկերության սահմանումը, բացահայտել ստարտափ ընկերությունների առանձնահատկությունները, զարգացման փուլերը, ստարտափ էկոհամակարգերի նշանակությունը, բաղադրիչներն ու դրանց ազդեցությունը ստարտափ ընկերության գործունեության և զարգացման վրա,
- ուսումնասիրել ստարտափ ընկերությունների դերը տնտեսության զարգացման գործում,
- ուսումնասիրել ստարտափ ընկերությունների զարգացման միտումները, կատարել միջազգային փորձի գնահատում,
- վերլուծել Հայաստանի Հանրապետության ստարտափ էկոհամակարգի ներկա վիճակը, կատարել պետական քաղաքականության, իրավաօրենսդրական դաշտի և

ստարտափ էկոհամակարգի բաղադրիչների ազդեցության գնահատում հայկական ստարտափ ընկերությունների զարգացման վրա,

- ՀՀ-ում հիմնադրված և գործող ստարտափ ընկերությունների հարցման արդյունքում ստացված տվյալների վերլուծության հիման վրա բացահայտել և վերլուծել գործող ստարտափ ընկերությունների մոտ առկա խնդիրները,
- մշակել բացահայտված խնդիրների լուծմանն ուղղված համապատասխան առաջարկություններ:

<u>Ատենախոսության գիտական նորույթը եվ արդյունքները</u>:

Ատենախոսությունում ստացված գիտական արդյունքներից կարելի է առանձնացնել գիտական նորույթ պարունակող հետևյալ հիմնադրույթները.

1. Հայկական ստարտափ էկոհամակարգի համակողմանի ուսումնասիրության արդյունքում գնահատվել է էկոհամակարգի հասունության մակարդակը՝ այն համապատասխանում է էկոհամակարգի հասունության չորս մակարդակներից առաջին՝ M1 ձևավորվող մակարդակին: Գնահատվել են էկոհամակարգի հասունության հաջորդ մակարդակին անցման հնարավորությունները և մոտեցումները:
2. Հաշվարկների արդյունքում հիմնավորվել է ներդրումային գործարքներում պետության և օտարերկրյա վենչուրային ֆոնդերի համատեղ մասնակցության, ինչպես նաև ներդրում ստացող ստարտափ ընկերություններին հարկային արտոնությունների տրամադրման արդյունավետությունը: Հաշվարկվել է պետության և մասնավոր վենչուրային ֆոնդի մասնակցության այնպիսի տոկոսային հարաբերակցություն, որի պայմաններում ապահովվում է շահութաբերության առավել բարձր մակարդակ և ոչ ֆինանսական օգուտներ՝ երկարաժամկետ հատվածում:
3. Հայկական ստարտափ ընկերությունների հարցման տվյալների վերլուծության արդյունքում վեր են հանվել ստարտափ ընկերություններին և ստարտափ էկոհամակարգի զարգացմանը խոչընդոտող խնդիրների գերակայությունները՝ ըստ էկոհամակարգի բովանդակային ուղղությունների:
4. Հարցման տվյալների կոռելյացիոն և գործոնային վերլուծության արդյունքում բացահայտվել են ստարտափ ընկերությունների զարգացմանը խոչընդոտող խնդիրների փոխադարձ ազդեցությունները, և խմբավորվել են ամենամեծ գործոնային ազդեցությամբ տարրերը՝ վեր հանելով ազդեցության հիմնական գործոնները:

<u>Ատենախոսության կառուցվածքը եվ հիմնական բովանդակությունը</u>:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից (115 անուն): Ատենախոսությունը կազմված է 148 էջից:

Ատենախոսության Ներածությունում ներկայացվել են թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը, գիտական նորույթը և կիրառման հնարավորությունները:

Առաջին՝ *«Սպարտպափ ընկերությունների և սպարտպափ էկոհամակարգի էությունը, բնութագրիչ առանձնահատկությունները»* գլխում անդրադարձ է կատարված գիտական գրականությունում ստարտափ ընկերությունների վերաբերյալ օգտագործված սահմանումներին և դրանցում ներկայացվող բնութագրիչ առանձնահատկություններին: Վերլուծվել են ստարտափ էկոհամակարգի բաղադրիչներն ու դրանց ազդեցությունը ստարտափ ընկերության գործունեության վրա, ինչպես նաև ուսումնասիրվել է ստարտափ ընկերությունների դերը որպես տնտեսական աճի խթանիչներ:

Երկրորդ՝ *«Սպարտպափ ընկերությունների զարգացման միտումները և խնդիրները»* գլխում կատարվել է աշխարհի առաջատար ստարտափ էկոհամակարգերի և տարածաշրջանի ստարտափ էկոհամակարգերի համեմատական գնահատում, ինչպես նաև Հայաստանի ստարտափ էկոհամակարգի դիրքային առանձնահատկությունների վերլուծություն:

Երրորդ՝ *«Սպարտպափ ընկերությունների զարգացման խնդիրները և դրանց հաղթահարման ուղիները ՀՀ-ում»* գլխում կատարվել է Հայաստանի ստարտափ էկոհամակարգի ներկա վիճակի ուսումնասիրություն, գնահատվել է էկոհամակարգի հասունության մակարդակը: Ուսումնասիրվել է Հայաստանում վենչուրային կապիտալի ոլորտի զարգացման ներկա վիճակը, ինչպես նաև հաշվարկվել է պետական համաֆինանսավորմամբ ներդրումային գործարքների և հարկային խթանների արդյունավետությունը: Ամփոփվել և վերլուծվել են հայկական ստարտափ ընկերությունների շրջանում անցկացված հարցման արդյունքները, կատարվել է կոռելյացիոն և գործոնային վերլուծություն, տրվել են առաջարկություններ խնդիրների հնարավոր լուծումների ուղղությամբ: Կարելի է փաստել, որ այս տեսանկյունից կատարված ուսունասիրությունը բավականին հետաքրքիր է օրիգինալ:

Ատենախոսության եզրակացությունների և առաջարկությունների բաժնում ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները և առաջարկությունները:

<u>Ատենախոսության արդյունքների տեսական եվ գիտագործնական նշանակությունը:</u>

Ատենախոսության մեջ ստացված արդյունքներն ունեն գործնական և տնտեսական նշանակության: Դրանք կարող են օգտակար լինել թեմային նվիրված ուսումնական /ինչպես բակալավրական, այնպես էլ՝ ասպիրանտական/ դասընթացների կազմակերպման, ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների հետազոտությամբ զբաղվող համապատասխան մասնագետների, ասպիրանտների և ուսանողների համար, ինչպես նաև կարող են կիրառվել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների կողմից՝ ստարտափ ձեռներեցության ոլորտի նկատմամբ պետական քաղաքականության բարելավմանն ուղղված ծրագրերի մշակման նպատակով: Հաշվի առնելով վերջին տարիներին ՀՀ բարձրտեխնոլոգիական սեգմենտի

ստարտափ հատվածի մեծ ակտիվությունը, պայմանավորված ինչպես հետքովիդային շրջանում

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գրախոսվող աշխատանքը բավականին ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է, ինչը սակայն զերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից: Այդ տեսակետից նշենք հետևյալը.

1. Հեղինակը աշխատանքի 1-ին գլխում առաջարկում է ստարտափի նոր սահմանում, ըստ որի՝ «ստարտափ ընկերությունը գերարագ աճի ներուժով, զարգացման տարանջատված փուլերով նորարարական բիզնես-նախաձեռնություն է, որը գործելով ռիսկային և անորոշության պայմաններում՝ աշխատում է սեփական բիզնես-մոդելի անընդհատ կատարելագործման ուղղությամբ՝ միաժամանակ խիստ կախված լինելով մասնավոր կապիտալից և ունենալով ձախողման բարձր հավանականություն» (էջ՝ 14): Այսպիսի սահմանումը, մեր կարծիքով վիճահարույց է և որոշակի իմաստով հակասություն է պարունակում այն իմաստով, որ մի կողմից գերարագ աճի մեծ ներուժի առկայության պնդումը բավականին խոցելի է, քանի որ այդ ներուժի բացահայտումը առաջին հերթին օրգանապես կախված է այն էկոմիջավայրից, որում տեղի է ունենում ստարտափի առաջխաղացումը, ուստի ստարտափին գերարագ աճի ներուժ վերագրելը կարծում ենք ոչ միշտ է տեղին: Բացի այդ, հեղինակի առաջադրած սահմանման մյուս հատվածը, որը վերաբերում է ստարտափերի ձախողման մեծ հավանականության պնդմանը, դա ևս կարծում ենք հստակեցման կարիք ունի:
2. Համաձայնելով աշխատանքի 1-ին գլխում հեղինակի կողմից ձևակերպված ստարտափերի զարգացման խնդիրները երկու խմբերով՝ էկոհամակարգային և միկրոմակարդակային, այդուհանդերձ գտնում ենք, որ աշխատանքը ավելի կշահեր, եթե խնդիրների այդ շարքին ավելացվերին մեզո- (մասնավորապես՝ մրցակցությամբ և շուկաների ընտրողական ճնշմամբ պայմանավորված), ինչպես նաև մակրոմակարդակի խնդիրները, մասնավորապես, ստարտափերի զարգացման խթանման գործիքակազմերի մշակման և կատարելագործման խնդիրները:
3. Մեր կարծիքով աշխատանքը ավելի կշահեր, եթե նրանում որոշակի ու ամբողջական անդրադարձ լիներ ստարտափերի ու կայացած խոշոր բիզնեսի փոխհարաբերության խնդիրներին: Հայաստանի պարագայում այդ խնդիրը առավել հրատապ թema այն իմստով որ մեր խոշոր բիզնեսը աչքի է ընկնում դիվերսիֆիկացման շատ ցածր աստիճանով, մյուս կողմից բազմաթիվ ստարտափ որոշակի ընկերություններ, ֆինանսավորման մեծ խնդիրներ ունենալով, որպես կանոն ձախողվում են: Մինչդեռ դրանք կարող էին համադրել իրենց ծրագրերը ու շուկայական նոր բրենդներ ստեղծել:
4. Ատենախոսության մեջ նկատվել են, որոշակի խմբագրական, սրբագրական և տեխնիկական բնույթի որոշակի անճշտություններ և վրիպակներ (էջեր՝ 5, 9, 18, 31 և այլն):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Չնայած նկատված առանձին թերություններին և բացթողումներին, որոնք մասնակի բնույթ են կրում, Քրիստինե Ռազմիկի Արշակյանի «Ստարտափների զարգացման խնդիրները և արդի մոտեցումները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը, ինչպես նաև սեղմագիրը բավարարում են Ը. 00. 02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի որակավորման պահանջներին:

Ատենախոսության հիմքում ընկած գիտական հրապարակումները ամբողջությամբ արտացոլված են աշխատանքում:

Քրիստինե Ռազմիկի Արշակյանի «Ստարտափների զարգացման խնդիրները և արդի մոտեցումները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը բավարարում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը. 00. 02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
24"05"2024 Ա. Շ. Մարգարյան

Պարոն Ա. Շ. Մարգարյանի
ստորագրությունը հաստատում եմ

ՀՊՏՀ գիտական քարտուղար՝
Ն. Դարբինյան